

Ներածություն

Սպառողների լայն շրջանին ուղղված վիճակագրական սույն ժողովածուում արտացոլված են հանրապետության սոցիալական վիճակը բնութագրող 2018թ. վիճակագրական ցուցանիշների քանակական վերլուծությունը և նախորդ մի շարք տարիների ամփոփ տվյալների դինամիկան: Ցուցանիշների ընտրությունը կատարվել է՝ ելնելով վիճակագրական տեղեկատվության սպառողների պահանջներից և միջազգային համադրելիության ապահովման անհրաժեշտությունից:

Ժողովածուի կազմման համար հիմք են ծառայել Վիճակագրական կոմիտեի (ԱՐՄՍՍՏՍ) կողմից հավաքագրված վիճակագրական տվյալները, մի շարք նախարարությունների ու գերատեսչությունների վարչական ռեգիստրների ամփոփ տվյալները: Վիճակագրական տեղեկատվություն տրամադրողների շրջանակը որոշվել է համապատասխան գերատեսչությունների հետ համատեղ՝ հիմք ընդունելով իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանի և գերատեսչական մարմինների վարչական ռեգիստրների տվյալները:

Ժողովածուում ներառված են հետևյալ բաժինները. կրթություն, գիտություն, առողջապահություն, դժբախտ պատահարներ արտադրությունում, սոցիալական ապահովություն, մանկատների, տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպությունների գործունեություններ, որդեգրում, մշակույթ, սպորտ, արխիվային, արտոնագրային, նոտարական գործունեություններ, ստանդարտացում, սերտիֆիկացում և հավատարմագրում, իրավական ոլորտ: Բաժիններն ավարտվում են հիմնական ցուցանիշների վիճակագրական դինամիկ շարքերով:

Հուսով ենք, ժողովածուն կարող է տեղեկատվական հիմք հանդիսանալ սոցիալական քաղաքականություն մշակողների և այն իրականացնողների, գիտակրթական գործունեությամբ զբաղվողների և վերլուծաբանների, ինչպես նաև հանրության լայն շրջանների համար:

Ժողովածուն պատրաստել է Վիճակագրական կոմիտեի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի սոցիալական վիճակագրության խումբը:

Պայմանական նշաններ

| | |
|--------------------------|-----|
| երևույթը բացակայում է | - |
| տվյալներ չկան | ... |
| չնչին մեծություն | 0.0 |
| ցուցանիշը չի հաշվարկվում | X |